«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

ԹԵՄԱ՝ ՍԱՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ (ՁԵՎԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ) ԵՎ ԴՐԱՆՑ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՃԻՇՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հաստատություն՝ Դարակերտի Մսուր-մանկապարտեզ

Ֆիզ. հրահանգիչ՝ Տիգրան Եղոյան

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 1.

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

1.1.**ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ և ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**.....6

1.2. ԸՆՏԱՆԻՔ - ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ և ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆՆԵՐԻ ՃԻՇՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՐԵԽԱՅԻ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....10

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 2.

2.1. ԿԶԱՊԿՈՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ.....17

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....20

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....20

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներառական կրթությունը ցանկացած նախադպրոցական երեխայի իրավունքների պաշտպանության կարևոր բաղադրիչներից մեկն է: Նրա հիմքում ընկած է բոլոր երեխաներին առանց խտրականության դաստիարակելու սկզբունքը: Այն նախադպրոցական հաստատություն հաճախելու հնարավորություն է տալիս կրթության զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԶԱՊԿՈՒ) երեխաներին: Կրթության զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների շրջանում դաստիարակման կազմակերպման ժամանակ առաջ են գալիս բազմաթիվ խնդիրներ, որոնք այդ գործընթացը դարձնում են առավել խրթին: Նմանօրինակ խնդիր է համարվում նրանց սոցիալականացումը, քանի որ, ի տարբերություն մյուս երեխաների, ԿԶԱՊԿՈՒ երեխաները, ելնելով տարբեր պատճառներից, պահանջում են առավել անհատական ու նպատակաուղղված մոտեցում: ԿԶԱՊԿՈՒ երեխաների համար մշակվում է ավելի ճկուն համակարգ, որպեսզի այն կարողանա բավարարել դաստիարակության, կրթական տարբեր պահանջներ ունեցող երեխաներին, և նրանք նույնպես մանկապարտեզում սովորելու ընթացքում հավասար իրավունքներ ու հնարավորություններ ունենան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կրթության զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր երեխա սովորելու, կրթվելու, դաստիարակվելու ճանապարհին ստիպված է լինում հաղթահարել բազմաթիվ խոչընդոտներ, որոնցից մեկը նշված համատեքստում սոցիալականացման կարողության դժվարություններն ու դրանց հաղթահարման ուղիներն են, կարող ենք նշել, որ վերոնշյալ հիմնախնդիրը բավական արդիական է և ենթակա է բազմակողմանի ուսումնասիրման: Նախ և առաջ կարևորություն պետք է տալ տեսական այն բոլոր մոտեցումներին, որոնք մինչ այս ուսումնասիրել են ԿԶԱՊԿՈՒ երեխաների կարիքի բացահայտումը և ուսումնադաստիարակչական աշխատանքների ճիշտ կազմակերպումը և այդ կարողության ձևավորման համար խոչընդոտ հանդիսացող խնդիրները:

Հետազոտության թեմայի արդիականությունը

Նախադպրոցական հաստատությունում ԿԶԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացման կարողության դժվարություններն ու դրանց հաղթահարման ուղիների ուսումնասիրումն ու կազմակերպումը այսօր դարձել է առավել կարևոր և հրատապ:

Այն օգնում է երեխաներին ոչ միայն հարմարվելու սոցիալական տվյալ խմբին ներկայացվող պահանջներին, այլև հիմնավոր ըմբռնելու բնագրերի դաստիարակչական, ուսուցողական, ճանաչողական, հայրենասիրական կողմերը, գնահատելու ազգային արժեքները, իրեն զգալու տվյալ հասարակության լիարժեք անդամ: Այս և վերը նշված մյուս իրողություններով էլ պայմանավորվում է թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը

Ուսումնասիրել և պարզել սաների կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտումը և ուսումնադաստիարակչական աշխատանքների ճիշտ կազմակերպումը:

Հետազոտության խնդիրներն են՝

1. ուսումնասիրել թեմային առնչվող գիտամեթոդական գրականություն, մասնավորապես տեսական այն մոտեցումները, որոնք արտացոլում են ԿԶԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացման ձևավորման և այդ կարողության ձևավորման ճանապարհին առաջ եկող խնդիրները,
2. ուսումնասիրել դաստիարակ -ծնող փոխհամագործակցության դրսևորումները սոցիալականացման դժվարությունների հաղթահարման գործում,
3. պարզել ԿԶԱՊԿՈՒ երեխաների ինտեգրվածության աստիճանը տարբեր իրավիճակներում
4. քննել համատեղ ուսուցման կազմակերպման և ԿԱՊԿՈՒ երեխաների համար առանձնահատուկ պայմանների ստեղծման հնարավորությունները,

Հետազոտության նորույթը

Մշակել ենք ԿԶԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացման դժվարությունների հաղթահարմանը միտված մեթոդական քայլաշար:

Հետազոտության մեթոդները

Թեմայի ուսումնասիրման ընթացքում կիրառել ենք հետևյալ մեթոդները՝

- տեսական՝ թեմային առնչվող մասնագիտական գրականության, առարկայական չափորոշիչների, ուսումնամեթոդական ձեռնարկների ուսումնասիրում, վերլուծություն,

Հետազոտության օբյեկտը նախադպրոցական հաստատությունում իրականացվող գործընթացն է՝ մասնավորապես ԿԶԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացման կարողության դժվարությունների և դրանց հաղթահարման ուղիների կազմակերպման համատեքստում:

Հետազոտության առարկան այն մեթոդական համալիրն է, որոնցով պայմանավորված է նախադպրոցական հաստատությունում ԿԶԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացման կարողության դժվարությունների հաղթահարումը:

ԳԼՈՒԽ 1.

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

1. Ներառական կրթությունը և դրա իրականացումը նախադպրոցական հաստատությունում

Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, այն ապահովում է հավասար վերաբերմունք բոլոր մարդկանց հանդեպ և կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ կրթության զարգացան առանձնահատուկ պայմանների կարիքներ ունեցող երեխաների համար: Ներառական կրթությունն իրենից ներկայացնում է հանրակրթության զարգացման գործընթաց, որը ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար [1] : Ուստի ներառական կրթությունը ապահովում է բոլոր տեսակի այն միջոցներով, որոնք ուղղված են երեխաների ամենատարբեր կարիքների բավարարմանը: Կարելի է ենթադրել, որ եթե ներառական կրթության մտցրած փոփոխությունները ուսուցումն ավելի արդյունավետ դարձնեն, ապա կշահեն բոլոր երեխաները, այլ ոչ միայն առանձնահատուկ զարգացման կրթության կարիքներ ունեցողները:

Նշենք, որ ներառական կրթության համընդհանուր կաղապար, որպես այդպիսին գոյություն չունի, որը հնարավոր է առանց որևէ փոփոխության ներմուծել յուրաքանչուր հասարակություն: Ամեն մի հանրություն ինքը պիտի մշակի և իրագործի սեփական գաղափարները:

Սակայն գոյություն ունեն որոշակի սկզբունքներ, որոնք պետք է հաշվի առնել ցանկացած միջավայրում.

- երեխաները հաճախում են տեղական՝ բնակավայրին մոտ գտնվող մանկապարտեզ,
- մեթոդիկան այնպիսին է, որ նպաստում է բոլոր երեխաների ուսուցմանը,
- բոլոր երեխաները մասնակցում են բոլոր միջոցառումներին՝ մրցույթներ, ցերուկույթներ, էքսկուրսիաներ և այլն,

---

[1] URL http://parents.disabilityinfo.am/inclusive-education/ 16.05.2021,15:30

- ներառական կրթության զարգացմանն օժանդակում են դաստիարակները, ծնողները, առհասարակ բոլոր նրանք, ում միջամտությունը կարող է այս կամ այն կերպ օգտակար լինել,
- ներառական կրթությունն օգնում է կանխել խտրականությունը երեխաների նկատմամբ՝ սատարելով նրանց բոլորին՝ ինչպես հաշմանդամությունունեցող անձանց, այնպես էլ չունեցողներին, իրենց՝ հասարակության լիիրավ անդամ լինելու գործում:

Պետք է հիշել՝

- ✓ ներառական կրթության իրագործմանն ուղղված բոլոր ջանքերը հենվում են իրավահավասարության գաղափարի վրա. եթե մենք դա անում ենք՝ ելնելով խղճահարությունից կամ բարեգործական մղումներից, երբեք չենք կարող անհրաժեշտ արդյունքի հասնել,
- ✓ բոլոր երեխաներն էլ կարող են սովորել. պետք է ապահովել համապատասխան պայմաններ նրանց կրթության համար,
- ✓ կան բազմաթիվ կրթօջախներ, որոնք աշխատում են ի շահ հաշմանդա- մություն ունեցող երեխաների և լավ են կատարում իրենց աշխատանքը: Եթե ներառական կրթության մեթոդաբանությունը մշակված է ողջ կրթական համակարգի համար, ապա ամեն մի երեխա կգտնի իր տեղն այդհամակարգում, և հնարավոր կլինի դպրոցում սովորելը համատեղել ընտանիքի գրկում ապրելու հետ:

Ինչպես ցանկացած նոր մոտեցում, որն հասարակության հետ գտնվում է ինտեգրման փուլում, այնպես էլ անցումը համընդհանուր ներառական կրթությանը առաջ է քաշում մեծ թվով հարցեր, որոնց պատասխանները հետաքրքիր և անհրաժեշտ են հասարակության գրեթե բոլոր խավերին: Դրանցից առաջինն այսհամատեքստում այն է թե «Ինչո՞ւ է ներառումն անհրաժեշտ»:

Քանի որ երեխաները, անկախ հաշմանդամություն կամ սովորելու դժվարու- թյուններ ունենալուց որոշակի դերակատարություն ունեն հասարակության կյանքում, ուստի վաղ սկիզբը հանրակրթական խաղա- խմբերում կամ մսուրներում, որոնց հաջորդում են միջնակարգ դպրոցն ու քոլեջը, լավագույն նախապատրաստությունն է ինտեգրված կյանքի համար

Հաշմանդամություն ունեցող երեխաներն ունեն նույն խմբին պատկանելու նույնպիսի իրավունք, ինչպես մյուսները, իսկ առանձնացված ուսուցումը սահմանափակում է ինքնաարտահայտման իրավունքներն ու հնարավորությունները:

Հաջորդ հարցը, որը ներառում է հասարակության տարբեր խավերի հետաքրքրությունների լայն շրջանակ, ներառական կրթության նպատակն է: Նշենք, որ այն նպաստում է հասարակության բոլոր անդամների հնարավորությունների հավասարեցմանը՝ հաստատելով նոր հարաբերություններ և ստեղծագործական հնարավորություններ, որոնք անցյալում անհնար էին: Ներառական կրթությունը մարդու իրավունք է, այն ապահովում է լավ կրթություն և սոցիալական առումով հիմնավորված է:

Քանի որ մանկապարտեզում երեխաներին միմյանցից առանձնացնելու օրինական հիմքեր չկան, ուստի երեխաները պետք է սովորեն միասին, դա օգտակար կլինի բոլորի համար: Պետք չէ նրանց պաշտպանել միմյանցից: Բոլոր երեխաներին պետք է կրթություն, որը կօգնի նրանց հարաբերություններ հաստատելու և պատրաստվելու կյանքին: Հաշվի առնելով մի շարք ուսումնասիրություններ ու տեսական մոտեցումներ՝ կարող ենք նշել, որ միայն ներառական մոտեցումը կարող է նվազեցնել վախը և նպաստել բարեկամության, հարգանքի ու փոխըմբռնման հաստատմանը:

Ինչպես հայտնի է, 2005 թ. սեպտեմբերի 1-ին ուժի մեջ մտավ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը: Դրանով պետականորեն ճանաչվեց և ամրագրվեց նաև ներառական կրթությունը Հայաստանում:

Այսպիսով Հանրակրթության ոլորտը կարգավորվում էր երկու առանձին օրենքով, և օրենքի մակարդակում ներառում չկար, իսկ սովորական՝ հանրակրթական հաստատություններում երկու առանձին գործընթաց էր գնում: Այդ իսկ պատճառով կարիք առաջացավ, որպեսզի օրենքները միավորվեն:

2014 թ. դեկտեմբերի 1-ին փոփոխություն կատարվեց «Հանրակրթության մասին» օրենքում և ուժը կորցրած ճանաչվեց «Կրթության առանձնահատուկ

պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը: Այդ փոփոխությամբ ՀՀ-ն հռչակեց ներառական կրթությունը որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունք: Մինչև 2025 թ. Հայաստանում կրթության կազմակերպումը կլինի ներառական: [3]

Այսպիսով, օրենքի նոր փոփոխությունը ենթադրում է ներառական կրթությանն աջակցող եռաստիճան՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություն-ների ներդրում դպրոցի, մարզի և հանրապետության մակարդակներում:

Օրենքի փոփոխությամբ երեխայի անհատական ուսուցման պլանը սահմանվում է որպես իրավական փաստաթուղթ՝ հիմնված հանրակրթության պետական չափորոշիչների, ծրագրերի և երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի արդյունքների վրա:

1.1 Ընտանիք - մանկապարտեզ համագործակցության դերը և դրա ազդեցությունը ԿԶԱՊԿՈՒ երեխայի պայմանների կարիքի բացահայտման գործիքների կիրառումը(ձևերը և միջոցները) և դրանց ուսումնադաստիարակչական աշխատանքների ճիշտ կազմակերպումը:

Սոցիալականացումը երկար և շատ բարդ գործընթաց է: Իր կառուցվածքով հասարակությունը տարբեր սոցիալական ինստիտուտների բազմակերպություն է, որոնք միմյանց հետ փոխկապվածության և փոխհամաձայնության մեջ են: Այս սոցիալական ինստիտուտները դիտվում են որպես մարդու հասարակական կյանքի կազմակերպման և կարգավորման պատմականորեն ձևավորված կառույցներ: Եվ հենց այս կառույցներում է երեխան ծանոթանում հասարակական նորմերին ու վարքագծային կանոններին և յուրացնում դրանք: Այստեղ հարկ է նշել, որ տարբեր սոցիալական ինստիտուտների դերը երեխայի սոցիալականացման գործընթացում նույնը չէ: Դրանցից մի քանիսն ունի տարերային ներգործություն երեխայի վրա նրա զարգացման և հասարակական էակ դառնալու գործընթացում, մյուսներն իրականացնում են նպատակասլաց ներգործություն նրա անձի ձևավորման վրա: Այսպիսի սոցիալական ինստիտուտներ են ընտանիքը, կրթությունը, մշակույթը և կրոնը: Ընտանիքը դիտվում է երեխայի սոցիալականացման գլխավոր սոցիալական ինստիտուտը, որտեղ երեխան յուրացնում է սոցիալական հիմնական գիտելիքները, ձեռք է բերում բարոյահոգեբանական կարողություններ և հմտություններ,

ընդունում է որոշակի արժեքներ և գաղափարներ, որոնք անհրաժեշտ են նրան այդ հասարակությունում ապրելու համար: Երեխայի արդյունավետ սոցիալականացման համար կարևոր նշանակություն ունի նաև կրթությունը: Կրթության միջոցով նույնպես երեխան շփվում և հաղորդակցվում է այն արժեքների հետ, որոնք տիրում են այդ հասարակությունում: Կրթական գործընթացում ձեռք բերելով գիտելիքներ՝ նա ոչ միայն զարգանում է, այլ նաև հարմարվում կյանքին այդ հասարակությունում: Մշակույթն այն սոցիալական ինստիտուտն է, որն ընդգրկում է մարդկության կողմից ստեղծված նյութական և հոգևոր արժեքները: Որպես մշակութային ազգ՝ մենք՝ հայերս, ստեղծել ենք մեր ազգային արժեքները, որոնցից շատերը դուրս են եկել ազգային շրջանակից, ճանաչվել և դարձել են համամարդկային արժեքներ (գիտություն, երաժշտություն, գրականություն, նկարչություն): Ազգային նկարագիրը պահպանելու համար յուրաքանչյուր երեխա նախ և առաջ պետք է ճանաչի իր ազգային, մշակութային արժեքները և միաժամանակ զարգացած մարդ դառնալու համար հաղորդակից դառնա համամարդկային արժեքներին, որ ստեղծել է մարդկությունը: Կրոնը՝ որպես սոցիալական ինստիտուտ, բարդ սոցիալական երևույթ է, միաժամանակ յուրահատուկ պատկերացումների, զգացմունքների, պաշտամունքային արարողությունների, կազմակերպությունների և հավատացյալների տարբեր միությունների մի ամբողջական համակարգ: Հավերժական բարոյական արժեքները (սերը և հոգատարությունը մերձավորների նկատմամբ, ազնվությունը, համբերատարությունը և այլն), որ քարոզում է եկեղեցին, կրոնական տոներն ու ավանդույթները, կրոնական երաժշտությունը և այլն, կարող են ունենալ մեծ ազդեցություն երեխայի կողմից հասարակության բարոյական նորմերի և վարքագծային կանոնների յուրացման գործում: Հետևաբար կրոնը կարող է խաղալ մեծ դեր երեխայի սոցիալականացման գործընթացում:

Ներկա ժամանակաշրջանում շատ է սրվել մարդ-հասարակություն հակամարտությունը, անձ-միջավայր համագործակցությունը: Տեղի է ունենում երեխայի ակտիվ սոցիալականացումն ընտանեկան, քաղաքացիական, կրոնական և իրավական դաստիարակության ոլորտում: Միջավայրի այսպիսի նպատակասլաց ներգործությունն էլ մարդու վրա կոչվում է սոցիալական դաստիարակություն: Սոցիալական դաստիարակություն ասելով՝ հասկանում ենք այն նպատակասլաց գործընթացը, որի ընթացքում տեղի է ունենում երեխայի անձի սոցիալական կարևոր հատկությունների ձևավորումը, որոնք նրան անհրաժեշտ են արդյունավետ սոցիալականացման համար: Սոցիալական դաստիարակությունը բազմամակարդակ գործընթաց է, գիտելիքների,

վարքագծային նորմերի, հասարակությունում միջանձնային փոխհարաբերությունների իմացություն: Եվ սրա արդյունքում անձը դառնում է հասարակության լիիրավ անդամ:

Սոցիալականացումը անձի կողմից տվյալ հասարակության մեջ ընդունված սոցիալական նորմերի, արժեքների և գիտելիքների յուրացման գործընթաց է: Այն թույլ է տալիս անձին համարվելու տվյալ սոցիալական խմբի անդամ և ներկայանալու որպես այդպիսին այլ սոցիալական խմբերին: Անձը ընդգրկվում է սոցիալականացման գործընթացի մեջ կյանքի ողջ ընթացքում, առանց որի նա չի կարող ստանձնել իր վրա որևէ հասարակայնորեն կարևորվող սոցիալական դեր: Անձի սոցիալական կայացումը պայմանավորված է լինում թե սոցիալական միջավայրի հետ նրա փոխգործողության բնույթից, և թե՝ անհատական հատկանիշներից: Նրա արտահայտությունը պայմանավորվում է անձի սոցիալական ձևավորման բնույթով՝ ի նկատի առնելով տարիքային առանձնահատկությունները: Այսպիսով, անձի սոցիալական կերպարը հանդես է գալիս որպես տվյալ հասարակությունում արժևորվող հիմնարար բնութագրական և արտահայտվում է տվյալ սոցիալական խմբի հետ անձի նույնականացման աստիճանով:

Սոցիալականացման բովանդակությունն բնորոշվում է հասարակությունում նշանակալից սոցիալական նորմերի և արժեքների տիրապետմամբ: Չնայած հասարակությունում անձի ներգրավմանը միտված սոցիալականացման ուղղվածությանը, այն նպատակաուղղված է նաև անձի ինքնառեալիզացմանն ու կայացմանը, այլ խոսքերով, անձնային դրական հատկանիշների զարգացմանը:

Ա.Վ.Պետրովսկին առանձնացնում է սոցիալականացման ընթացքում անձի զարգացման երեք փուլ. ադապտացումը, անձնավորացումը և ինտեգրումը [4; 11]: Առաջին՝ ադապտացիոն փուլը, համընկնում է մանկության հետ, երբ անձը յուրացնում է իրեն շրջապատող մարդկանց սոցիալական փորձը և հանդիսանում է դաստիարակության և կրթության օբյեկտ: Երկրորդ փուլում կարևորվում է նախկինում յուրացրած արժեքների և նորմերի անձի վերարտադրության կարողությունը: Դրանք անձը ջանում է վերարտադրել ոչ միայն իրենց սովորական ձևով, այլև՝ փորձում է ներկայացնել յուրովի և տալ երևույթների սեփական մեկնաբանությունները: Անձնավորացման այս փուլը առավել վառ է արտահայտվում դեռահասության շրջանում, երբ անձի գործունեությունը դառնում է ինքնաներկայացման և ինքնահաստատման միջոց: Ինտեգրման փուլը հանդես է գալիս հասարակության հետ անձի գոյատևման համաչափությամբ և ներդաշնակությամբ: Որքանով անձը իրեն գիտակցում է հասարակության լիիրավ անդամ, ընդունում և կիսում է

հասարակական նորմերն ու արժեքները, այնքանով նա համարվում է սոցիալականացված և հասարակայնորեն կայացած անձնավորություն:

Սոցիալականացման արդյունքում ձևավորվում են անձի այնպիսի հատկանիշներ, որոնք վկայում են տվյալ սոցիալական խմբին նրա պատկանելիության մասին: Անձը իր կյանքի ողջ ընթացքում շարունակում է հանդես գալ սոցիալական հարաբերությունների թե օբյեկտի, և թե՝ սուբյեկտի կարգավիճակում: Այսպիսով, սոցիալիզացիայի օբյեկտ հանդիսացող անձը աստիճանաբար վեր է ածվում հասարակության այլ անդամների նկատմամբ սուբյեկտի և ինքն է ընդգրկվում հասարակական արժքների փոխանցման գործընթացի մեջ: Այդ գործընթացի ընթացքը պայմանավորվում է մի շարք գործոններով: Ա.Վ.Մուդրիկը առանձնացնում է սոցիալականացման չորս գործոնների խմբեր [9]:

Ինչպես գիտենք, ընտանիքն սոցիալական այն հիմնական ու կարևոր ինստիտուտն է, որի դերն ու նշանակությունը երեխայի կյանքում որոշիչ է: Ընտանիքները որոշիչ դեր ունեն նաև ներառական կրթության գործընթացում։։ Նշենք նաև, որ, ցավոք, լինում են դեպքեր, երբ ծնողները փոքր դերակատարում են ունենում իրենց երեխաներիկրթության գործում:

Ընտանիքների դերի փոփոխությունը՝ պլանավորման գործընթացին վերաբե- ռող տեղեկատվությունը պասիվ ստացողից դեպի ակտիվ մասնակցողի, վճռական նշանակություն ունի կրթության առանձնահատուկ զարգացման պայմանների կարիք ունեցող աշակերտների ներառական կրթության պլանավորման համար: Այս փոփոխությունը թե՛ ընտանիքների և թե՛ մասնագետների համար ինքնին հսկայական փոփոխություն է: Այս փոփոխությունը կարևոր է, քանի որ ընտանիքները երեխայի մասին տիրապետում են առավել հարուստ տեղեկատվության, քան մասնագետները և գիտեն ավելին, քան վկայում են թեստերի արդյունքներն ու գնահատականները:

Հենց ընտանիքներն են, որ գիտակցում են երեխայի առաջընթացն ու կարիքները, սակայն, հիմնականում, մնում են որպես չօգտագործված ռեսուրս: Հայաստանում կրթության զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների ընտանիքների և մասնագետների առաջին հանդիպումը տեղի է ունենում մանկավարժահոգեբանական գնահատման ժամանակ: Ընտանիքներն այս թիմի անդամներն են և մասնակցում են քննարկումներին, խորհրդակցություններին, հանդիպումներին և դասընթացներին:

Միգուցե ելնելով նրանից, որ ներառական կրթությունը նոր մոտեցում և գործընթաց է մեր հասարակությունում, ուսումնասիրությունները վկայում են, որ ներառական կրթության

համատեքստում մանկավարժներն ու ընտանիքները չունեն համագործակցության անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ: Մինչդեռ կարծում եմ, որ այդ համագործակցությունն էական նշանակություն ունի կրթության արդյունավետության հարցում:

Մի շարք ուսումնասիրություններ փաստում են, որ, երբ ընտանիքներն ու դաստիարակները հանդես են գալիս որպես գործընկերներ, ավելի հավանական է դառնում բոլոր երեխաների ուսումնառության և դաստիարակության հաջող ընթացքը:Մի շարք ուսումնասիրություններ փաստում են, որ, երբ ընտանիքներն ու դաստիարակները հանդես են գալիս որպես գործընկերներ, ավելի հավանական է դառնում բոլոր երեխաների ուսումնառության և դաստիարակության հաջող ընթացքը:

Երբ խոսքը վերաբերում է ներառական կրթությանը, ընտանիքի և երեխայի կարիքներն ու տեսակետները կարող են բնութագրվել նրա խորապես ճանաչող մասնագետների կողմից: Այս մոտեցումը ներկայումս լայն տարածում չունի, քանի որ երեխայի ընտանիքը մասնագետների կողմից դեռևս լիարժեք չի ընդունվում որպես դպրոցի միջավայրի մաս ու չի արժևորում նրա դերը: Ընտանիքի հետ հարաբերություններ հաստատելու համար կարևոր են երկխոսությունն ու սերտ շփումները: Մասնագետին կարող է հետաքրքրել, թե.

ա) ի՞նչն է մոտիվացնում ընտանիքին,

բ) որո՞նք են նրանց՝ մանկապարտեզի կյանքի մեջ ներգրավվածությունից հետ պահող մտավախությունները,

գ) ինչպե՞ս է մանկապարտեզը ընտանիքին հրավիրել մասնակցելու երեխայի կրթական գործընթացի պլանավորման գործընթացին:

Այսօրինակ հարցերն օգնում են հասկանալու և ողջունելու ընտանիքի մասնակցությունը կրթության պլանավորման գործընթացին: Դրա հետ մեկտեղերեխային լավագույնս օժանդակելու համար ընտանիքը պետք է ընդունի, որ երեխան ունի կրթության զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք և ցանկանա աշխատել ուսուցիչների և այլ մասնագետների հետ: Վարքագծի նման փոփոխություն ընտանիքի և մասնագետների համար կարող է անսովոր լինել: Այս նոր մոտեցումըթե՛ ընտանիքից և թե՛ մասնագետներից պահանջում է ժամանակ և նպատակադրում:

Հարկավոր է նկատի ունենալ ընտանիքի բոլոր անդամների մասնակցության

խրախուսումը: Մասնակիցների մեջ մտնում են ինչպես ծնողները, այնպես էլ ընտանիքի մերձավոր անդամները: Այս փոփոխությունը քննելիս, հաճախ օգտագործվում են այնպիսի եզրույթներ, ինչպիսիք են մասնակցությունը և ներգրավվածությունը: Սոսկ մասնակցությունից դեպի ներգրավվածություն մեկ քայլէ: Այն ցույց է տալիս դպրոցի դիրքորոշումը ընտանիքների ներքին կարողության ճանաչմանն ու նրանց թիմի լիիրավ անդամ ընդունելուն ընդառաջ: Հաճախ ընտանիքները մանկապարտեզում չեն ունենում ներգրավվածության զգացում և, իրենց անզոր զգալով՝ հեռանում են գործընթացից: Ուժեղ, զորացնող գործընկերային հարաբերությունների պարագայում մասնագետներն ընտանիքի համար ստեղծում են զարգանալու և թիմային գործընթացում ակտիվ դերեր ստանձնելու հնարավորություններ: Անցումը մասնակցության և ընդգրկման մոդելից դեպի ներգրավվածություն պահանջում է ավելի բարձր մակարդակի երկխոսություն և համագործակցություն: Մասնակցությունն այդ դեպքում պահանջում է որոշակի պատասխանատվության ստանձնում, որոշակի գործողությունների կատարում:

Ներգրավվածությունը պահանջում է բարձր մակարդակի համագործակցություն և հզորացնում է դաստիարակին, ուսուցչին ու բազմամասնագիտական թիմի մյուս անդամներին: Միաժամանակ, ներգրավվածությունը ընտանիքին հնարավորություն է տալիս զարգացնելու երեխային օժանդակելու ստեղծագործական մոտեցումները:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 2.

2.1. ԿԶԱՊԿՈՒ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Ինչպես արդեն նկատեցինք, ներառական կրթությունը ցանկացած երեխայի իրավունքների պաշտպանության կարևոր բաղադրիչներից մեկն է: Նրա հիմքում ընկած է բոլոր երեխաներին առանց խտրականության ուսուցանելու սկզբունքը: Այն նախադպրոցական հաստատությունում սովորելու հնարավորություն է տալիս կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման կազմակերպման ժամանակ առաջ են գալիս բազմաթիվ խնդիրներ, որոնք այդ գործընթացը դարձնում են առավել խրթին: Նմանօրինակ խնդիր է համարվում սոցիալականացման կարողության ձևավորումը, քանի որ ի տարբերություն մյուս երեխաների, ԿԶԱՊԿՈՒ երեխաների դեպքում, ելնելով տարբեր պատճառներից, այն պահանջում է առավել անհատական ու նպատակաուղղված մոտեցում:

ԿԶԱՊԿՈՒ երեխաների համար մշակվում է ավելի ճկուն մոտեցում, որպեսզի այն կարողանա բավարարել տարբեր կրթական պահանջներ ունեցող երեխաներին, ևնրանք նույնպես մանկապարտեզ հաճախելու ընթացքում հավասար իրավունքներ ու հնարավորություններ ունենան: Ուստի վերոնշյալ հիմնախնդիրը բավական արդիական է և ենթակա ուսումնասիրման:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ կրթության առանձնահատուկ գրգռման պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր երեխա սովորելու, կրթվելու ճանապարհին ստիպված է լինում հաղթահարել բազմաթիվ խոչընդոտներ, որոնցից ամենակարևորը սոցիալականացման դժվարություններն ու դրանց հաղթահարումն է, վստահորեն կարող ենք ասել, որ այս հիմնախնդրի բազմակողմանի և խորքային ուսումնասիրումը կարող է հանգեցնել ցանկալի արդյունքի, որով հիմնախնդրի հետ անմիջականորեն առնչվող մի շարք հարցեր կստանան իրենց բովանդակալից պատասխանները:

ԿԶԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացման կարողության դժվարություններն ու դրանց հաղթահարումը պարզելու համար առավել նպատակահարմար է իրականացնել

որակական հետազոտություն, հարցում ինչպես դաստիարակների և բազմամասնա-գիտական թիմի, այնպես էլ ծնողների շրջանում:

Հարցման այս մեթոդը ենթադրում է հատուկ մշակված հարցաշար, որը կներառի ուսումնասիրության առավել հետաքրքրական հարցադրումները: Այս մեթոդը ենթադրում է անձի սոցիալական աշխարհի բազմակողմանի և խոր ուսումնասիրություն: Հարցազրույցի այս տեսակը ճկուն է և դինամիկ: Այն իրենից ենթադրում է հարցնողի և հարցվողի դեմ առ դեմ փոխազդեցություն, որն ուղղված է հարցվողի կյանքը, կենսափորձն ու իրավիճակը իր իսկ տեսանկյունից, իր իսկ բառերով հասկանալուն ու մեկնաբանելուն:

Նշված մեթոդի առավելությունն այն է, որ կարճ ժամանակում հնարավոր է հավաքագրել շատ տեղեկատվություն խնդրո առարկայի վերաբերյալ: Հարցաշարում տեղ գտած հարցերի վերաբերյալ պարզաբանումները կատարվում են տեղում և բացառվում է երրորդ անձի հնարավոր ազդեցությունը հարցվողի կարծիքի վրա:

Խնդրո առարկայի առավել խորքային և համակողմանի վերլուծության համար հարցում անցկացնելուց բացի նպատակահարմար է միաժամանակ իրականացնելնաև դիտում՝ կոնկրետ աշակերտի և դասի օրինակով:

Հետազոտության ընթացակարգը պարունակում է 3 հիմնական փուլ՝ նախապատրաստական, տեղեկատվության հավաքման և վերլուծության:

Նախապատրաստական փուլում իրականացրել ենք մեթոդաբանական և մեթոդական մշակում, կազմել հետազոտության գործիք հարցաշարը, ապա աշխատանքները իրականացվել են հետազոտության գործիք հանդիսացողմշակված հարցաշարով:

Հետազոտության երրորդ փուլում իրականացվել է արդյունքների վերլուծություն, որի արդյունքում էլ ուսումնասիրության հիմնահարցը պարզվել է:

«ԿԶԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացման կարողության դժվարություններն ու դրանց հաղթահարման ուղիները նախադպրոցական հաստատություններո» թեմայով մեր հետազոտության համար նպատակահարմար ենք գտել մշակված հարցաշարով հարցում իրականացնել մանկապատեզի դաստիարակների շրջանում,

Իրականացված հետազոտության արդյունքում նախադպրոցական հաստատությունում աշխատող տասը դաստիարակների 50%-ը այն հարցին, թե ինչպե՞ս են վերաբերվում համընդհանուր ներառական կրթությանը, տվել են՝ ոչ լավ, ոչ վատ պատասխանը: Նման պատասխանն իրենից չեզոքություն է ենթադրում: Եթե նկատի ունենանք այն փաստը, որ համընդհանուր ներառական կրթությունը մեր հասարակության համար նոր երևույթ է, ապա նման պատասխանի համար կարող ենք գտնել մի շարք պատճառներ ու շարժառիթներ:

30%-ի համար համընդհանուր ներառական կրթությունը բավականին լավ է և նպատակաուղղված:



Քանի որ առավել ճիշտ ու նպատակահարմար է, որ կրթության զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտները դասավանդվեն անհատական ուսումնական պլաններով (ԱՈՒՊ), հարցաշարում ընդգրկել ենք այսպիսի հարց.

2.Քանի որ ԿԶԱՊԿՈՒ երեխաների ուսումնառության համար անհրաժեշտ են տեխնիկական միջոցներ, մարզական միջոցառումների կազմակերպում, վերականգ-նողական կաբինետներ, սնունդ, բժշկական սպասարկում և այլ ծառայություններ ու միջոցներ, մեր ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ մանկապարտեզի

շատերը մասամբ են կահավորված նման միջոցներով ու մասամբ են իրականացնում նմանօրինակ ծառայություններ: Ուսումնասիրված մանկապարտեզների 70%-ը ունի մասնակի կահավորում ԿԶԱՊԿՈՒ սաների համար, իսկ մնացած 30%-ը չունի նպաստավոր պայմաններ ԿԶԱՊԿՈՒ երեխաների ուսումնառությունը ճիշտ կազմակերպելու համար:



<<Ըստ Ձեզ, ԿԶԱՊԿՈՒ երեխաների մանկապարտեզ հաճախելը ինչպիսի՞ ազդեցություն է թողնում խնդիրներ չունեցող երեխաների վրա>> հարցին դաստիարակների 40%-ը դժվարացել է պատասխանել: 40%-ի համար, այն փաստը որ ԿԶԱՊԿՈՒ երեխաները ստանում են համընդհանուր կրթություն, դաստիարակություն բոլորի հետ միասին, այն ունենում է և՛ դրական, և՛ բացասական ազդեցություն թե՛ ԿԶԱՊԿՈՒ երեխայի,և թե՛ մյուս աշակերտների համար: Մնացած 20%-ը լիովին դրական է տեսնում ԿԶԱՊԿՈՒ երեխաների համընդհանուր կրթություն ստանալու փաստը:

Դժվարացել է պատասխանել: 40%-ի համար, այն փաստը որ ԿԶԱՊԿՈՒ երեխաները ստանում են համընդհանուր կրթություն բոլորի հետ միասին, այն ունենում է և՛ դրական, և՛ բացասական ազդեցություն թե՛ ԿԶԱՊԿՈՒ երեխաների,և թե՛ մյուս երեխաների համար: Մնացած 20%-ը լիովին դրական է տեսնում ԿԶԱՊԿՈՒ երեխաների համընդհանուր կրթություն ստանալու փաստը:

4.Ըստ Ձեզ ԿԱՊԿՈՒ երեխաների դպրոց հաճախելը ինչպիսի՞ ազդեցություն է թողնում խնդիրներ չունեցող երեխաների վրա

10 responses



Ինչ վերաբերում է մանկապարտեզում բազմամասնագիտական թիմի անդամների գործառույթին, հարցին՝ «Ի՞նչ գործառույթ է իրականացնում բազմամասնագիտա- կան թիմը ԿԶԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքներ տանելու հարցում», դասվարների պատասխաններն հիմնականում նույնատիպ էին:

- ✓ Պարապմունքի ընթացքում օգնում է դաստիարակին:
- ✓ Անհատական պարապում է ԿԶԱՊԿՈՒ երեխաների հետ:
- ✓ Հանդիպումներ է կազմակերպում ծնողների հետ:
- ✓ ԿԶԱՊԿՈՒ երեխաների հետ ունեցած փոխհարաբերությունների մասին:
- ✓ Բազմամասնագիտական թիմի մասնագետներն օգնում են հարթել ծագածու միջանձնային խնդիրները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով «ԿԶԱՊԿՈՒ երեխաների կարիքի բացահայտումը և ուսումնադաստիարակչական աշխատանքների ճիշտ կազմակերպումը խորագրով հետազոտական աշխատանքը՝ եկանք հետևյալ եզրահանգումների.

1. Թեմային առնչվող գիտամեթոդական գրականության ուսումնասիրության արդյունքում պարզեցինք, որ բավարար չեն կոնկրետ ԿԶԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացման ձևավորմանն ուղղված մեթոդական ձեռնարկները:
2. Ծնողների՝ իրենց գործառույթներին ոչ բավարար իրազեկված լինելու մակարդակը խոչընդոտում է ԿԶԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացման կարողության լիարժեք ձևավորմունը:
3. Համատեղ ուսուցման կազմակերպման և ԿԶԱՊԿՈՒ երեխաների համար առանձնահատուկ պայմանների ստեղծման հնարավորությունները դեռևս լիարժեք ձևավորված չեն:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Սաների ԿԱՊԿՈՒ կարիքի բացահայտումը և ուսումնադսատիարակչական աշխատանքների ճիշտ կազմակերպումը» թեմայով մեր կատարածհետազոտության արդյունքում կարող եմ անել հետևյալ առաջարկությունները.

1. Մեծացնել ընտանիք-մանկապարտեզ համագործակցությունը, ծնողներին ընձեռել թիմի աշխատանքներին ակտիվորեն մասնակցելու լիարժեք հնարավորություններ:

2. Դաստիարակների և բազմամասնագիտական թիմի անդամների համար կազմակերպել «ԿԶԱՊԿՈՒ երեխաների սոցիալականացման դժվարություններն ու դրանց հաղթահարման ուղիները տարրական դասարաններում» թեմայով վերապատրաստումներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՑԱՆԿ

1. Ավագյան Ա., Գրիգորյան Ա., Թադևոսյան Է. և այլք, Լոգոպեդիան գործնականում, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2017:
2. Ավագյան Ա., Գևորգյան Ե., Գևորգյան Ս., Կյուրեղյան Հ., Գրիգորյան Ռ., (Խմբ.) Մինեապոլիս, Մինեսոթա, ԱՄՆ. Մինեսոթայի համալսարան: ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան եւ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Ներառական կրթության ռազմավարություններ դասագիրք, Երևան2019:
3. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի դասավանդման մեթոդիկա, Երևան, 2018:
4. Հարությունյան Ջ. Վ., Հովյան Գ. Ռ., Կրթության կազմակերպումը ներառա-կանության համատեքստում, «Մանկավարժական միտք», 4 (71), Երևան, 2018:
5. ՀՀ Սյունիքի մարզում ներառական կրթություն իրականացնող հանրակրթական հաստատությունների կողմից մատուցվող կրթական ծառայությունների մոնիտորինգի զեկույց, Գորիս, 2016:
6. ՀՀ օրենքը «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, Երևան, 2014:
7. Պայլոզյան Ժ., Թադևոսյան Է., Հանրակրթական դպրոցի լոգոպեդական աշխատանքի հեռանկարային պլաններ , Երևան, 2004:
8. Պետրոսյան Ս., Ներառական կրթությունը գործնականում (ուսումնամեթոդական ձեռնարկ)., Երևան, 2018:
9. Սարգսյան Ի., Ինչպե՞ս հաղորդակցվել հաշմանդամություն ունեցող երեխաների հետ, Երևան, 2015:
10. Барбера М. Л., «Детский аутизм и вербально-поведенческий подход» http://www.rama-dety.com/books/product-1233.html
11. Мелешкевич О., Эрц Ю., «Особые дети. Введение в прикладной анализ поведения» http://www.labirint.ru/books/426924/.

12. Ньюмен С. «Игры и занятия с аутичным ребенком», http://www.childneurologyinfo.com/education-text-games3.php
13. Хей Д., Потеря слуха /Вопросы и ответы/ Москва, Крон-Пресс, 1998.
14. Образцова Т. Н., Юмористические игры для детей, Москва, 2010.